Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24925

331.88(47.92
R-95

Арм
3-3740а
15 JAN 2010
3-3740а
331.88(47.925)
П-95

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ

72/125

21704

ԹԻՖԼԻՍ
Էլէֆտրաւարտ տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մադաթեան փող. № 5
1906 (189).

24 JUL 2013

24923

Арм.

1905 թ. սեպտեմբերի վերջերը և հոկտեմբերի սկզբներին Տփխիսում կայացած ընդհանուր ուսուցչական ժողովներում որոշուեց հիմնել «Հայ Ուսուցչական Միութիւն»։ Այս որոշումն իրագործելու նպատակով ընտրուած մասնաժողովը կազմելով Միութեան կանոնադրութեան նախագիծը, ներկայացրեց 1906 թ. յունիսին դարձեալ Տփխիսում կայացած ընդհանուր ուսուցչական ժողովի քննութեանը։

Ուսուցչական համաժողովը մանրամասն քննութեան ենթարկելով կանոնադրութեան այդ նախագիծը՝ կազմեց «Ռուսահայոց Դպրոցների Ուսուցչական Պրոֆէսիոնալ Միութեան» սոյն կանոնադրութիւնը և հրահանգ տուեց Կենտրոնական Խորհրդին՝ սկսել Միութեան գործունէութիւնը համաձայն այս կանոնադրութեան։

«ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ
ՊՐՈՖ. ՄԻՈՒԹԵԱՆ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1906 թ. օգոստոս
Տփխիս։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Մ. Մ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ՊՐՕԳԷՍԻՕՆԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլուխ Ա.

Միութեան նպատակը

§ 1. Միութեան նպատակն է՝ 1—բարձրաւել իր անդամների տնտեսական դրութիւնը. 2—հոգալ նրանց մտաւոր և ֆիզիքական կրթութեան մասին. 3—պաշտպանել և բարձրացնել իր անդամների իրաւական դրութիւնը դպրոցական կեանքում։

§ 2. Այս նպատակին հասնելու համար միութիւնը դիմում է հետևեալ միջոցներին.

ա—որոշում է դասագրքի կամ ուսման մինիմումը.

բ—կազմում է փոխատու խնայողական ըրամարկղներ՝ առանձին կանոնադրութեամբ.

գ—բաց է անում իւր անդամների համար՝ սանատորիա, էժանագին բնակարաններ, ժողովարան, հիւանդանոց։

դ—հրատարակում է իր օրգանը մանկավարժական բաժնով։

ե—բաց է անում օրինակելի դպրոց, կազմակերպում է մանկավարժական դասընթացներ և փորձնական դասեր։

զ—հիմնում է մանկավարժական թանգա-

բան, կազմում է ցուցահանդէս, գրադարան՝ շարժական և անշարժ։

է—հասցնում է իր անդամներին իրաւաբանական օգնութիւն։

ը— կազմակերպում է պատուի և միջնորդ դատարաններ։

թ—իւր պաշտօնազուրկ անդամներին և առհասարակ հայոց դպրոցների ուսուցիչներին ու վարժուհիներին օգնում է՝ պաշտօն գտնելու։

Գլուխ Բ.

Միութեան իրաւունքները

§ 3. Միութիւնը իրաւունք ունի անշարժ կայքեր ձեռք բերելու։

§ 4. Միութիւնը ունի առանձին կնիք այս վերնագրով. «Ռուսահայոց դպրոցների ուսուցչական պրոֆէսիոնալ միութիւն»։

§ 5. Միութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն կանոնադրութիւնը։

Գլուխ Գ.

Միութեան միջոցները։

§ 6. Միութեան միջոցները կազմում են՝

ա—անդամակցական վճարներ։

բ—անդամավճարներ։

գ—տոկոսներ և եկամուտներ Միութեան ունեցած գումարներից և շարժական ու անշարժ կայքերից։

դ—նուիրաբերութիւններ։

ե—կողմնակի արդիւնքներ՝ թատերական ներկայացումներից, պարահանդէսներից, վիճակախաղերից, հրապարակական դասախօսութիւններից, գրական երեկոյթներից և այլն։

Գլուխ Դ.

Միութեան գումարները

§ 7. Միութեան գումարները լինում են.

ա—ընթացիկ,

բ—յատուկ գումարներ։

§ 8. Յատուկ գումարները գոյանում են.

ա—որոշ նպատակով նուիրած գումարներից և նրանց տոկոսներից։

բ—միութեան եկամտի մի որոշ մասից՝ ընդհանուր ժողովների որոշմամբ։

գ—յատուկ նպատակով տրուած ներկայացումներից, դասախօսութիւններից, երեկոյթներից և այլն։

Գլուխ Ե.

Միութեան կազմը, անդամների իրաւունքները եւ պարտականութիւնը։

§ 9. Միութիւնը կազմում են իսկական անդամները։

§ 10. Միութեան անդամ կարող են լինել Ռուսահայոց [1]) դպրոցների այն ուսուցիչները և ուսուցչուհիները, որոնք պաշտօն ունին անդամ գրուելիս [2])։

§ 11. Միութեան անդամը պարտաւոր է վճարել յօգուտ միութեան գրամարկղի։

ա—անդամակցական վճար.

բ—անդամավճար.

Ծանօթ. 1) Ռուսահայոց դպրոցներ ասելով, պէտք է հասկանալ՝ ծխական, թեմական և առհասարակ հայոց եկեղեցական դպրոցները։

2) Միութեան այն անդամը, որ պաշտօնից զրկւում է, բայց պրոֆէսիան չի փոխում, կարող է մնալ իբրև անդամ։

գ—անդամակցական վճարը մէկ ռուբլի է և ուղարկւում է կենդրօնական խորհրդին։

դ—իբրև անդամավճար իւրաքանչիւր անդամ տարեկան վճարում է իւր ստացած ռոճկի կէս տոկոսը ($^1/_2$ %)։

Գլուխ Զ.

Միութեան գործադիր մարմինները։

§ 12. Միութիւնը կազմուած է զանազան տեղերում գտնուող ճիւղերից, որոնց համար պարտադիր է սոյն կանոնադրութիւնը։

§ 13. Միութեան ճիւղերը կազմւում են, երբ անդամների թիւը առնուազն 15 է [1]։ Ճիւղերն իրենց գործունէութիւնը կարող են սկսել, երբ ստացուի կենդրօնական խորհրդի համաձայնութիւնը [2]։

§ 14. Ճիւղերի վարչութիւնները ընտրւում են մի տարով և բաղկացած են 3—5 հոգուց։

§ 15. Ճիւղերն իրենց ձեռքի տակ ունեցած գումարների մի որոշ տոկոսը, համաձայն պատգամաւորական համաժողովի որոշման, ուղարկում են խորհրդին [3]։

Գլուխ Է.

Վարչութիւնների զբաղմունքը։

§ 16. Վարչութիւնների զբաղմունքներն են.

ա—միութեան ճիւղի դրամների և կայքերի պահպանութիւնը և կառավարութիւնը։

1) Նոյն քաղաքում միայն մի ճիւղ կարող է լինել։

2) Վիճակի սահմանները որոշում է միութեան ճիւղի ընդհանուր ժողովը։

3) Ճիւղերը միութեան առաջին տարին ուղարկում են խորհրդին իրենց գումարների 25%-ը։

բ—միանուագ նպաստներ և օժանդակութիւններ տալը՝ համաձայն տեղական ընդհանուր ժողովի մշակած առանձին հրահանգների։

գ—պարբերական նպաստներ տալը՝ կենդրօնական խորհրդի հաստատութեամբ [1]։

դ—տեղական ընդհանուր ժողովների համար ամեն տեսակ զեկուցումներ կազմելը։

ե. կանոնաւոր հաշուապահութիւն ունենալը և իւրաքանչիւր տարուայ գործունէութեան ամփոփման հաշիւ տալը ընդհանուր ժողովին։

զ—իւրաքանչիւր տարուայ նախահաշիւ կազմելը և ընդհանուր ժողովին ներկայացնելը՝ ի ստուգութիւն, ապա խորհրդին՝ ի հաստատութիւն։

է—ընդհանուր ժողովի վճիռները և խորհրդի յանձնարարութիւնները կատարելը։

Գլուխ Ը.

Ընդհանուր ժողովներ։

§ 17. Բոլոր ճիւղերը ունենալու են պարտադիր կերպով տարեկան մի մի անգամ ընդհանուր ժողովներ՝ հաշուի և նախահաշուի համար։ Ընդհանուր ժողովները կարող են լինել և արտակարգ՝ վարչութեան կամ վերաստուգիչ ժամանակ ժողովի հրաւէրով և կամ ճիւղի անդամների $^1/_3$-ի ցանկութեամբ։

§ 18. Ընդհանուր ժողովը համարւում է կանոնաւոր, եթէ ներկայ են անդամների $^1/_2$-ից աւել։

§ 19. Անդամների թուի սակաւութեան պատճառով եթէ առաջին ընդհանուր ժողովը չկայացաւ, այն ժամանակ նշանակւում է երկրորդ ժողովը։

1) Այնուհետև այդպիսի նպաստները տրւում են կենդրօնական խորհրդի կողմից՝ ուր էլ որ լինի անդամը։

ղով, որ կայացած կհամարուի՝ առանց ի նկատի ունենալու ներկայ եղող անդամների քանակութիւնը։

§ 20. Ամեն մի ընդհանուր ժողով իւրաքանչիւր անգամ ընտրում է իւր նախագահը և քարտուղարը, որոնք վարչութեան կամ վերաստուգիչ մասնաժողովի անդամներից չպէտք է լինեն։

Գլուխ Թ.

Ընդհանուր ժողովների զբաղմունքները։

§ 21. Ընդհանուր ժողովների զբաղմունքներն են՝

ա—անցած տարուայ հաշուի և առաջիկայ տարուայ նախահաշուի քննելն ու վաւերացնելը և կենդրոնական խորհրդին ի հաստատութիւն առաջարկելը։

բ—վարչութեան անդամների, փոխանդամների, նոյնպէս և վերաստուգիչ մասնաժողովի անդամների ընտրութիւնը ու պաշտօնից հեռացնելը։

գ—վարչութեան կամ մի որևէ անդամի զեկուցումների և յայտարարութիւնների քննելը[1])։

դ—անդամների և վարչութեան մէջ ծագած տարաձայնութիւնների և բողոքների քննութիւնը և որոշ եզրակացութեան չեկած դէպքում կենդ. խորհրդի վերջնական վճռին դիմելը։

ե—անշարժ կայքեր գնելու կամ ծախելու հարցի որոշումը։

ծանօթ. 1) Անդամները իրենց զբաւոր զեկուցումները և բողոքները ընդհանուր ժողովին ներկայացնում են վարչութեան միջոցով։

Գլուխ Ժ.

Վերաստուգիչ մասնաժողովներ։

§ 22. Ընդհանուր ժողովը իւրաքանչիւր տարի [1]) ընտրում է վերաստուգիչ մասնաժողով երեք անդամից բաղկացած, որոնց պարտաւորութիւնն է քննել վարչութեան բոլոր գործերը և զեկուցանել ընդհանուր ժողովին։ Վերաստուգիչ մասնաժողովի անդամները չեն կարող վարչութեան անդամներից լինել։ Կարևոր դէպքում կենդրոնական խորհուրդը կարող է իր միջից ևս ուղարկել քննիչ յանձնաժողով՝ վարչութեան գործերը քննելու համար։

§ 23. Պատգամաւորական համաժողովը ևս ընտրում է 1 տարով երեք անդամներից և 2 փոխանդամներից բաղկացած վերաստուգիչ մասնաժողով՝ քննելու կենդրոնական խորհրդի գործերը և զեկուցանելու իրեն։

Գլուխ ԺԱ.

Միութեան կենդրոնական խորհուրդը եւ կազմը։

§ 24. Միութեան կենդրոնական խորհուրդը ընտրուում է պատգամաւորական համաժողովից 1 տարի ժամանակով. կենդ. խորհրդի տեղը որոշում է պատգամաւորական համաժողովը։

§ 25. Կենդ. խորհուրդը վարում է միութեան գործերը, պատգամաւորական համաժողովի տուած որոշումների համաձայն։

§ 26. Կենդ. խորհուրդը կազմուում է պատգամաւորական համաժողովից ընտրուած 9 ան-

ծանօթ. 1) Տարի ասելով հասկացւում է ակադէմիական տարին։

դամներից և 5 փոխանդամներից։ Կենդ. խորհրդի անդամները իրենց միջից ընտրում են նախագահ, փոխնախագահ, քարտուղար և դանձապահ։

§ 27. Միութեան ընդհանուր գործերին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները և պայմանագրերը պէտք է ստորագրէ կենդրոնական խորհրդի նախագահը. իսկ միութեան գումարների պահանջումը բանկային հաստատութիւններից կամ փոխադրութիւը, պէտք է ստորագրեն կենդ. խորհրդի նախագահը և երկու անդամները։

Գլուխ ԺԲ.

Կենդրոնական խորհրդի զբաղմունքները։

§ 28. Կենդ. խորհուրդը կենդրոնացնում է իւր մէջ բոլոր ճիւղերի կայքերի, դրամագլուխների և ուրիշ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները։

§ 29. Կենդ. խորհուրդը իր գումարները յանձնում է պետական կամ մասնաւոր ապահով բանկերին, որոշ ժամանակով կամ ընթացիկ հաշւով՝ իր մօտ պահելով մի փոքրիկ գումար ընթացիկ ծախքերի համար։

§ 30. Իւրաքանչիւր տարուայ վերջը կենդ. խորհուրդը կազմում է ընդհանուր նախահաշիւ միութեան յաջորդ տարուայ ծախքերի համար, նախապէս ստանալով վարչութիւններից ճիւղերի նախահաշիւները։ Կենդ. խորհուրդը քննում և փոփոխուած կամ անփոփոխ հաստատում է ճիւղերի նախահաշիւները։

§ 31. Իւրաքանչիւր տարի վարչութիւններից ստանալով ճիւղերի նախընթաց տարուայ հաշիւները, կենդ. խորհուրդը կազմում է միութեան բոլոր գործերի ընդհանուր հաշիւը և առաջարկում պատգամաւորական համաժողովի քննութեան։

§ 32. Կենդ. խորհուրդը քննում է ճիւղերի վարչութիւնների մէջ եղած տարաձայնութիւնները։

§ 33. Կենդ. խորհուրդը պատգամաւորական համաժողովի նիստերի օրակարգը նախապէս որոշելով՝ գրաւոր յայտնում է բոլոր ճիւղերի վարչութիւններին։

Գլուխ ԺԳ.

Կենդրոնական Խորհրդի իրաւունքները։

§ 34. Կենդ. խորհուրդն ունի հետևեալ իրաւունքները՝

ա—իրեն տուած իշխանութեան սահմաններում ամեն տեսակ պայմաններ և դաշինքներ կապելը.

բ—շարժական և անշարժ կայքերի և գոյքերի գնումն և վաճառումն պատգամաւորական համաժողովի որոշմամբ.

գ—միութեան գործերի վերաբերմամբ դատավարութիւնը և նրա շահերի պաշտպանութիւնը՝ իր հաւատարմատարների ձեռքով.

դ—միութեան գործերի վերաբերմամբ բոլոր կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների և անձանց հետ հաղորդակցութիւնը։

Գլուխ ԺԴ.

Պատգամաւորական համաժողով

§ 35. Պատգամաւորական համաժողովը կազմւում է ճիւղերի ներկայացուցիչներից. իւրա-

քանչիւր 15 անդամ մէկ ներկայացուցիչ է ուղարկում

§ 36. Պատ. համաժողովը կայանում է տարին մէկ անգամ՝ նախորդ պատգամաւորական համաժողովի որոշած տեղում։

§ 37. Պատ. համաժողովի գումարուելու ժամանակը (ամիսը) որոշում է նախորդ պատգամաւորական համաժողովը։

§ 38. Պատգ. համաժողովը կարող է լինել և արտակարգ՝ կենդ. խորհրդի կամ վերաստուգիչ մասնաժողովի հրաւէրով և կամ միութեան բոլոր անդամների $^1/_5$-ի ցանկութեամբ՝ խորհրդի կողմից առաջարկուած ըէֆէրէնդումի միջոցով։

§ 39. Պատգամաւորական համաժողովը կանոնաւոր է, եթէ ներկայ լինի բոլորի պատգամաւորների թուի $^1/_2$-ից աւելին։

§ 40. Պատգամաւորական համաժողովը իւրաքանչիւր անգամ պէտք է ընտրէ իր նախագահը և քարտուղարը, որոնք կենդ. խնրհրդի և վերաստուգիչ մասնաժողովի անդամներից չպէտք է լինեն։

Գլուխ ԺԵ.

Պատ. համաժողովի զբաղմունքները։

§ 41. Պատգամաւորական համաժողովի զբաղմունքներն են՝

ա—կենդ. խորհրդի ներկայացրած և միութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ մէկ տարուայ հաշիւների քննելն ու հաստատելը. հետևեալ տարուայ նախահաշուի հաստատելը.

բ—դասագնի մինիմումի հարցը ըստ բայոնների—և դասերի թուի մաքսիմումի որոշումը.

գ—կենդ. խորհրդի անդամների, փոխանդամների և վերաստուգիչ մասնաժողովի անդամների ընտրութիւնն ու պաշտօնից հեռացնելը.

դ—ճիւղերի վարչութիւններից ստացուած զեկուցումների և յայտարարութիւնների քննութիւնը.

ե—խորհրդի և վարչութիւնների մէջ ծագած տարաձայնութիւնների (ոչ անհատների) քննութիւնը և վերջնական վճիռ կայացնելը.

զ—միութեան կանոնադրութեան փոփոխութեան հարցին վերաբերեալ քննութիւնը.

է—միութեան փակման խնդրի քննութիւնը։

ԾԱՆՕԹ. Պատ. համաժողով չկայացած դէպքում՝ միութեան փակման մասին կենդ. խորհուրդը թէ լրագրութեան և թէ պաշտօնական առանձին յայտարարութիւնների միջոցով յայտնում է բոլոր ճիւղերի վարչութիւններին, որպէս զի նրանք իրենց ընդհանուր ժողովների վճիռներն ուղարկեն խորհրդին՝ յայտնելով միութեան խափանումն ցանկացողների թիւը։

Գլուխ ԺԶ.

Միութեան խափանումն։

§ 42. Միութեան խափանման համար անհրաժեշտ է պատգամ. համաժողովի բոլոր անդամների $^2/_3$-ի վճիռը։

§ 43. Եթէ որևէ պատճառով միութիւնը դադարեցնէ իւր գոյութիւնը, միութեան բոլոր կայքերը անցնում են միութեան խափանումը որոշող համաժողովի նշանակած հիմնարկութեանը՝ այն պայմանով, որ այդ հիմնարկութիւնը շարու-

ԾԱՆՕԹ. Եթէ որևէ պատճառով նախապէս որոշուած պատ. համաժողովը չկայանայ, լիազօրութիւն է տրւում կենդ. խորհրդին՝ որոշել նոր համաժողովի տեղը և ժամանակը։ Առաջին պատգամաւորական համաժողովի տեղը և ժամանակը որոշում է ժամանակաւոր կենդ. խորհուրդը։

Арм.
3-3740

նակէ ստացած գոյքերի եկամտով ամեն կարգի նպաստներ տալը՝ համաձայն միութեան նախնական որոշումների։ Մնացած գոյքերը և եկամուտները պիտի ծառայեն հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների ապահովութեան գործին։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ԻՆ ՍՍՌ
Ա. ԱՄ. А. МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0197673

H Арк
3-37402.